

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ի 2017 թվականի N _____Ա

«ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ԵՎ
«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 64-րդ հոդվածները և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի Մյասնիկյան 1/1 հասցեում գտնվող վարժարանի շենքը՝ 782.25 քառ. մետր ընդհանուր մակերեսով, գրադարանը՝ 88.6 քառ. մետր ընդհանուր մակերեսով, արհեստանոցը՝ 110.5 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 0.36 հա մակերեսով հողատարածքը (իրավունքի գրանցման 2016 թվականի հունիսի 29-ի թիվ 29062016-10-0003 վկայական), հետ վերցնել «Վայքի քաղաքային պետական հանրակրթական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և թողնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

2. «Վայքի քաղաքային պետական հանրակրթական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 44.210.00322) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 44.210.00341):

3. Սահմանել, որ՝

1) «Վայքի քաղաքային պետական հանրակրթական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան,

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են՝ «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

4. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Վ.Տեր-Առաքելյան 10 հասցեում գտնվող վարժարանի շենքը՝ 1383.2 քառ. մետր ընդհանուր մակերեսով, էլեկտրական ենթակայանը՝ 19.9 քառ. մետր ընդհանուր մակերեսով, եռակցման արհեստանոցը՝ 120 քառ. մետր ընդհանուր մակերեսով, հյուսնի արհեստանոցը՝ 96 քառ. մետր ընդհանուր մակերեսով, կաթսայատունը՝ 12.6 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 1.66339 հա մակերեսով հողատարածքը (իրավունքի գրանցման 2015 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 22102015-10-0006 վկայական), հետ վերցնել «Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և թողնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

5. «Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 65.210.00406) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Եղեգնաձորի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 65.210.00424):

6. Սահմանել, որ՝

1) «Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Եղեգնաձորի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան,

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են «Եղեգնաձորի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

7. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի հետ համատեղ ապահովել սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերում նշված՝ միացած պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝

1) հանձնվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև հաստատել գույքի կազմը, արժեքը, միացման պայմանագրերը և փոխանցման ակտերը.

2) գործունեության դադարման պետական գրանցումը.

3) սովորողների (այդ թվում՝ հիմնական ծրագրով սովորող 5-9-րդ դասարանների աշակերտների, մարման կարգով)՝ «Վայքի ավագ դպրոց» և «Եղեգնաձորի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում ուսումնառության բնականոն գործընթացը:

8. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել «Վայքի ավագ դպրոց» և «Եղեգնաձորի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրություններում վերակազմակերպումից բխող համապատասխան փոփոխությունների կատարումը և պետական գրանցումը:

9. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, տալ առաջարկություն՝ սույն որոշման 1-ին, և 4-րդ կետերում նշված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի Մյասնիկյան 1/1 և Եղեգնաձոր քաղաքի Վ. Տեր-Առաքելյան 10 հասցեներում գտնվող անշարժ գույքերի հետագա օգտագործման վերաբերյալ:

«Հ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ԵՎ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ուսումնական հաստատություններում աշակերտների թվի նվազման և ուսումնական տարածքների (շենք) օպտիմալ օգտագործմամբ:

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում գործում է «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որտեղ ուսումնառում է 143 աշակերտ: Դպրոցն ունի 5 մասնաշենք և նախատեսված է 400 աշակերտի համար: Վայքում գործում է նաև «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որտեղ ուսումնառում է 50 աշակերտ, ունի 22 աշխատող՝ 13 ուսուցիչ, 3 վարչական աշխատող, ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմ՝ թվով 6-ը:

«ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնառում է 58 աշակերտ, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Եղեգնաձորի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, որը նախատեսված է 464 աշակերտի համար, ուսումնառում է 204 աշակերտ, ունի 20 աշխատող՝ 11 ուսուցիչ, 2 վարչական աշխատող, ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմ՝ թվով 7:

«ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելով և միացնելով «Վայքի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, իսկ «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելով և միացնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության «Եղեգնաձորի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ հնարավորություն կստեղծվի ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման համար, ինչի արդյունքում միացվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կկազմակերպվի առավել արդյունավետ, ինչն էլ իր հերթին կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Միացման արդյունքում, նոր հաստիքացուցակների հաստատմամբ հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես վարչական և ուսումնաօժանդակ, պայմանավորված նոր ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ / աշակերտների թվի փոփոխություն/:

Ակնկալվող արդյունքը

Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» և «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» **պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին»** Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» և «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» **պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին»** Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ԵՎ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ արդարադատության նախարարություն	1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան» և «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական	1. Ընդունվել է	1. Որոշման նախագծում 7-րդ կետում առաջարկին համապատասխան «3-րդ և

		<p>հանրակրթական վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 7-րդ կետում «3-րդ և 7-րդ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2-րդ և 5-րդ» բառերով, քանի որ միացող պետական ոչ առևտրային կազմակերպությունները նշված են Նախագծի 2-րդ և 5-րդ կետերում:</p> <p>2. Նախագծի 7-րդ կետի 1-ին ենթակետում «միացած պետական ոչ առևտրային կազմակերպություններին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «միացած պետական ոչ առևտրային կազմակերպությունների» բառերով, քանի որ գույքը հանձնվում է ոչ թե միացած պետական ոչ առևտրային կազմակերպություններին, այլ վերջիններիս գույքն է հանձնվում միացման արդյունքում ընդլայնվող կազմակերպություններին:</p> <p>3. Նախագծի 10-րդ կետում «5-րդ» թիվն անհրաժեշտ է փոխարինել «4»-րդ թվով:</p>	<p>2. Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p>	<p>7-րդ» բառերն փոխարինվել է «2-րդ և 5-րդ» բառերով:</p> <p>2. Որոշման նախագծի 7-րդ կետում առաջարկին համապատասխան «միացած պետական ոչ առևտրային կազմակերպություններին» բառերն փոխարինվել է «միացած պետական ոչ առևտրային կազմակերպությունների» բառերով:</p> <p>3. Որոշման նախագծի 10-րդ կետում առաջարկին համապատասխան «5-րդ» թիվն փոխարինվել է «4»-րդ թվով:</p>
2.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-07-12 թիվ 01/9-2/12675-17</p>	<p>Նախագծի 5-րդ կետով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հետ վերցվող գույքի մակերեսը կազմում է 1631.7 քառ. մետր, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված 2016 թվականի պետական ոչ առևտրային կազմակերպությունների նպատակային և ձեռնարկատիրական գործունեության ֆինանս-</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Որոշման նախագծում հետ վերցվող գույքի մակերեսը ըստ 22.10.2015թ.-ին տրաված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում նշված է առանձին շինությունների քառակուսի մետրերը, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1631.7 քառ.մետր իսկ միայն ուսումնական մասնաշենքինը 1383.2 քառ. մետր է:</p>

		<p>սատնտեսական արդյունքների մասին հաշվետվությամբ տրամադրված տեղեկատվության համաձայն այն կազմում է 1383.2 քառ. մետր: Ուստի, առաջարկում ենք ճշգրտել առկա անհամապատասխանությունը:</p>		
3.	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</p> <p>2017-07-04</p> <p>01/15.1/4177-17</p>	<p>1.Որոշման Նախագիծը, մասնավորապես՝ 10-րդ կետը հակասում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի դրույթներին: Վարժարանները ներառում են 5-9-րդ դասարանները և գործում են ՀՀ մարզպետարանների ենթակայությամբ: Այս առումով՝ առաջարկում ենք քննարկել վարժարանների ու ավագ դպրոցների միաձուլման ձևով վերակազմակերպման ճանապարհով մարզային ենթակայությամբ միջնակարգ դպրոցներ ստեղծելու հարցը:</p> <p>2.Որոշման Նախագծի տեղեկանք-հիմնավորման մեջ բացակայում է միացման ձևով վերակազմակերպման արդյունքում հաստիքների հնարավոր կրճատման, ինչպես նաև կրճատվող հաստիքներ զբաղեցնող անձանց այլ աշխատանքի տեղավորման</p>	<p>1.2ի ընդունվում</p> <p>2.Ընդունվել է .</p>	<p>1.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են ուսումնական հաստատությունների տեսակները: Ուսումնական հաստատությունը, ըստ իրականացվող կրթական ծրագրերի կարող է լինել վարժարան՝ 5 -12 -րդ դասարաններ և հաստատության ենթակայության սահմանափակում օրենքով նախատեսված չէ: ՀՀ կառավարության 2008 թ. մարտի 27-ի նիստի 12 արձանագրային որոշմամբ հաստատվել է ավագ դպրոցների զարգացման ռազմավարական ծրագիրը և 2009-2010 ուսումնական տարվանից ներդրվել է եռամյա ավագ դպրոցի ծրագիրը: Երևան քաղաքում և ՀՀ մարզերում ավագ դպրոցների ընտրությունը կատարվել է մանրամասն քննարկումների և ուսումնասիրությունների արդյունքում: Ռազմավարական ծրագրի համաձայն՝ փոքր քաղաքային համայնքներում նախատեսվել է առնվազն 1 ավագ դպրոց՝ հոսքային ուսուցում իրականացնելու նպատակով: Ավագ դպրոցի առաքելությունն իրականացնելու համար նրատակահարմար չէ տվյալ տարածքում միջնակարգ դպրոցի գոյությունը:</p> <p>2. Որոշման նախագծի հիմնավորման մեջ կատարվել է լրացում նախատեսվող հաստիքների կրճատման մասին:</p>

		<p>հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:</p> <p>3. Որոշման Նախագիծը ներկայացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարան քննարկման, որի արդյունքների մասին Ձեզ կներկայացվի լրացուցիչ:</p>		<p>14.07.2017 թվականի դրությամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանից կարծիք չի ստացվել:</p>
4.	<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2017-07-11 թիվ 01/22.2/4255-17</p>	<p>1. Հանել Որոշման նախագծի 2-րդ և 6-րդ կետերը, քանի որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան> և ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն> պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության միջև կնքված չեն անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրեր:</p> <p>2. Միաժամանակ հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի մուտքերն ապահովելու նպատակով նախատեսվում է պետական սեփականություն հանդիսացող ազատ տարածքները օտարել կամ տրամադրել վարձակալության, առաջարկում եմ հանել նաև Որոշման նախագծի 12-րդ կետը:</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Չի ընդունվում</p>	<p>1. Որոշման նախագծից հանվել է 2-րդ և 6-րդ կետերը:</p> <p>2. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հետ քննարկման արդյունքում կարող նշված տարածքները բարելավելու նպատակով ամրացվի մարզում գործող այլ ուսումնական հաստատություններին:</p>
5.	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 2017-06-30 ՄՍ/4066-17</p>	<p>Նախագծի 2-րդ կետում ՀՀ Վ.Վ.Վ. թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N XX/XX պայմանագիրը,>> բառերը փոխարինել ՀՀ 15.02.2006 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 43017724-0180-0208 պայմանագիրը,>> բառերով:</p>	<p>1. Ընդունվել է,</p>	<p>1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության առաջարկի համաձայն Որոշման նախագծի 2-րդ կետը հանվել է:</p>